

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10106

10106

891.99
10-95

2014-2015

100

ИУНИВЕРСИТЕТ

САНКТ-ПЕТЕРБУРГСКИЙ

ФИЗИЧЕСКИЙ

9.

2011

398.2
P 8.0
[1923]

891.39
R-95

Ա. 8

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI LIBRARY
■ ARMENIAN

ՍԱՍՈՒՑԻՑԻ ԴԱՒԻԹԸ

(Դիւցազներգութիւն)


Ը

Նկարագրդուած Վլաչի կողմէ

PRINTED IN FRANCE

Հրատարակութիւն «ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ» գրատան
46, Rue Richer, Paris (9^e).

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI LIBRARY



ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Կայ Մեծարենց, կայ Տէրեան, — եւ բազում ուրիշ
պուտներ կան,
Բայց — Թումանեանն է անհաս Արարատը մեր
նոր Քերքութեան :—

Եղիշե ԶԱՐԵՆՅ

(Գիրք Ճանապարհի)



112537-42

2154-2011

ՅՈՎՅԱՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ժողովրդական բանաստեղծ, Յովհան Թումանեան ծնած է Լոռի Դսեղ գեղին մէջ 1869ին: Գրել կարդալ կը սորվի քահանայ հօրմէն, յետոյ կը տարուի Թիֆլիս, Ներսէսեան դպրոցին մէջ լրացնելու համար իր ուսումը: Երեք տարի յաճախելէ յետոյ, կը հեռանայ, առանց չատ բան սորվելու: Հաղիւ 16-17 տարեկան, կը մտնէ Թիֆլիսի առաջնորդարանը իրեւ քարտուղար: Ասիկա կ'ըլլայ իր առաջին ու գերջին պաշտօնը, որովհետեւ անկէ յետոյ դրականութեան կը նույիրուի:

Քերթուածները գրել կը սկսի 10-11 տարեկանին: 1892ին առաջին անդամ ըլլալով լոյս կ'ընծայէ երկու փոքրիկ տետրակներ: Այդ հատորներէն մէկուն մէջ էր «Շունն ու կատուն» չատ ծանօթ քերթուածը, որ ժամանակին մերժուած էր Մուրի խմբադիր Ա. Արասիսանեանի կողմէն:

Երկերը լոյս տեսած են երեք անդամ: 1892ին Մոսկուայի մէջ, մօտաւորապէս 300 էջ: Երկրորդ անդամ 1903ին Թիֆլիս, եւ երրորդ անդամ Պոլիս 1922ին: Այս մերջին հաւաքածոն ինքն իսկ կը պատրաստէ 1921ին, յապաւելով նախապէս հրատարակուած քերթուածներէն ոմանք, իր իսկ բառերով «իրր իր հոգիին անհարազատ արտայայտութիւններ», եւ միւսներուն լրաց կը կատարէ սրբադրութիւններ, կրթատումներ ու փոփոխութիւններ: 1908-1910ին կ'ախշատակցի մանկական ամսագիր Հասկերուն, զոր կը խմբագրէր մանկավարժ Ստ. Լիսիցեան, ինչպէս նաեւ Լուսարեր մայրենի լեզուի դասագրքերու: Սիրուած ամէնուն կողմէ, անիկա բերած է իր մասնակցութիւնը գրեթէ հանրային ամէն ձեռնարկներու, բնդէ: պատերազմէն առաջ ու յետոյ: 1919ին կը տօնուի ծննդեան յիսնամեակը, մեծ հանդէսներով: Մահը տեղի կ'ունենայ Մոսկուայի մէջ 1923 սովորի 2ին, եւ աճիւնը կը փոխադրուի Հայաստան:

Շնորհիւ իր ունեցած հարուստ եւ ճոխ մատենադարանին, Թումանեան կը ճանչնար միջազգային դլուխ-գործոցները: Կը սիրէր կարդալ մանաւանդ հէքեաթներ, դիւցազներգութիւններ եւ աւանդակէպեր, որոնցմէ տուաւ մէր դրականութեան արժէքաւոր էջեր: Յովհան Թումանեանի ստեղծագործութիւնը կրնանք բաժնել հետեւեալ դլուխներուն. ա. Երգեր, բ. Քառեակներ, գ. Աւանդավկայեր, առասպելներ եւ առակներ, դ. Փողովրդական վեպեր ու ֆերբուածներ եւ ե. Թարգմանութիւններ (ոռուական, գերմանական եւ անդլական դրականութիւններէն):

Յովհան Թումանեանի մահուան տասնեւինամեակին (1923) եւ Մասունցի Դաւիթին հազարամեակին առքիւ, որ Երեւանի մէջ պիտի տօնուի հանդիսաւորապէս յառաջիկայ Մայիս 1ին, ԿեԱՆՔ եւ ԱՐՈՒԵՍՏԻ խմբագրութիւնը գուրգուրանենով հրատակութեան կուտայ հայ գրականութեան քանիկապին վաստակներէն մէկը կազմող այս դիւցազներգութիւնը, որ ժողովրդական ծանօթ վկայ վերամշակուած մէկ փոփոխակն է: Նախապէս ծանօթանակն սակայն Բրոփ. Մանուկ Արեդեանի մէկ պատկառելի երկասիրութեան հետ, ԱԱՍՆԱ ԾՌ ԵՐ անունով, որուն ա. հատորը Երեւանի մէջ լոյս տեսած է 1936ին, նույիրուած ըլլալով այդ դիւցազներգութեան 25 փոփոխակներուն, յարակից ներածութիւնով ու յառաջարաբաններով:



ԱԱՍՆԱ ԾՌԵՐ

ԱԱՍՆԱ ԾՌԵՐ արժէքաւոր երկասիրութիւնը լոյս ընծայելէ առաջ, վաստակաւոր ուսուցչապէտ Մանուկ Արեդեան բանասիրական ուրիշ կարեւոր աշխատութիւններ լոյս ընծայած է: Առաջինը ատոնցմէ Փշանեֆներ ժողովրդական բանահիւսութեան հատորն է, տպուած 1892ին Թիֆլիս: Երկրորդը՝ Հայ ժողովրդական առասպելները, լոյս տեսած է Վաղարշապատի մէջ 1899ին: Երրորդը՝ Հայ ժողովրդական վեպն է, տպագրուած՝ նախապէս Ազգագրական Հանդէսի 13-17 գիրքերուն մէջ 1906-1908 տարիներուն, եւ յետոյ առանձին հատորի մէջ արտասպուած Թիֆլիս՝ 1908ին: 1933ին ալ Հայոց լեզուի տաղաչափութիւն անունով նոր աշխատութիւն մը լոյս կ'ընծայէ, ուր կը խօսուի ԱԱՍՆԱ ԾՌԵՐ վէպին ոտանաւորի եւ տաղաչափութեան մասին:

1936 տարուան վերապահուած էր սակայն հրատարակութիւնը ԱԱՍՆԱ ԾՌԵՐ մեծածաւալ եւ իրապէս պատկառելի երկասիրութեան ա. հատորին, որ 1126 մեծալիր էջերու մէջ կ'ամփոփէ 25 փոփոխակները, հեղինակին որակումովը պատումները ժողովրդական այս շատ ծանօթ դիւցազներգութեան:

Հատորը լոյս ընծայուած է, ինչպէս Հայուստանի բոլոր հրատարակութիւններն առանց բացառութեան, Պետական Հրատարակչականին կողմէ, իմբագրութեամբ Բրոփ. Դր. Մանուկ Արեդեանի եւ աշխատակցութեամբ Կարապետ Մելիք Օհանջանեանի: Գիրքը նկարներ կը պարունակէ եւ զարդանկարուած է ծանօթ նկարիչ Յակոբ Կողմէ:

Ժողովրդական այս մեծ ստեղծագործութեան՝ ՍՍՍՌԻՆՑԻ ԴԱ-
ԻՒԹԻ նիւթը հերոսներու ազատազրական պայքարն է արարական
խալֆաներու դէմ, որոնց տիրապետութիւնը Հայաստանի վրայ տե-
ւաց եօթներորդ դարէն մինչեւ տասներորդ դար : Այդ ընդողումը շարք
մըն է ապստամբութիւններու, որոնց մէջ ամէնէն տեւի փայլեցաւ
Սասունի ժողովուրդը իր քաջներու խումբով : Այդ զիւցազներուական
վիպասանութեան մէջ կը գտնենք ամբողջ ժողովուրդի մը կեանքին
եւ սովորութիւններուն արձագանքը, տիրարուներուն իրարու հետ
ունեցած յարաբերութիւնը, եւ Հայ ժողովուրդին օտար լուծէ ազատ
եւ անկախ ապրելու դարաւոր ձգումը, որուն հարազատ եւ անխար-
դախ դիմք երեւան ըմբին նոր ժամանակներու սերունդները, իբրև է
շարունակողները երէկուան պայքարներուն եւ հերոսական գործե-
ռուն :

Առաջին անգամ Գ. Վ. Արուանձտեանն է, որ Մուշի վոփիսակը
դրի կ'առնէ «Սասունցի Դաւիթը» կամ «Մէկերի գուլո» վերնագրով՝
Գրաց-բրոցի մէջ : Երկրորդ վոփիսակը գործն է Բրոֆ. Մ. Արեգեանի
«Դաւիթ եւ Մէկեր» անունով :

Սաման ծներու առաջար կը պարունակէ . ա . ներածութիւն մը
35 էջ, ը . ընդհանուր նախարանը 8 էջ, գ . առաջին հատորին նախա-
րանը 6 էջ, ուր կը խօսուի Մոկսի, Շատախի, Սպարկերտի, Գալաշի
եւ Հայոց Զորի տեղադրութեան վրայ . դ . Յիշուած զաւառներուն
վոփիսակներուն բարբառային քերականութեան զիտելիքները 20 էջ :
Որոնց կը յաջորդէ նկարիչ Յ . Կոջոյեանի գունաւոր մէկ նկարը՝ Սա-
սունցի Դաւիթը երիվարի վրայ բռնած թուր-կայծակին :

Ամէն մէկ պատում կամ վոփիսակ իր յառաջարանն ունի, ուր
կը խօսուի պատմողին անձին ու նկարագրին մասին :

ԱՀաւասիկ թէ, հատորին խմբագիրը, բանասէր Մ . Արեգեանը
ինչպէս կը սահմանէ Սասնա ծները . — «Մէր Սասնա ծները (ծուռ կը
նշանակէ դիւ, խենթ կամ չերոս), իր հիմնական մասով ինչպէս եւ իր
ընդհանուր բնաւորութեամբ, պատմական է : Բայց վէպը գարերի ըն-
թացքում սերնդից սերունդ բանաւոր աւանդելով՝ աճել, զարգացել
է նաեւ բազմազան վիպական եւ առասպելական մօթիւներով, որոնց
մի մասը քաղաքած է ազգային առասպելների, միւսը՝ թափառակա-
զրոյցներից : Վերջիններիս համեմատութիւնը եւ յաճախ նոյնութիւնը
հարեւան ժողովուրդների, յատկապէս իրանի եւ Միջաւեւու : ժողո-
վուրդների վիպաշխարհի հետ, ակներեւ են : Այդ մօթիւների շարքին
են պատկանում, օրինակ, հերոսների ջրային ծնունդը, կոխը վի-
շապների հետ, մանկութիւնն ու մանկական շարութիւնները, գերբ-
նական չգորացումը, փորձութիւնը վաւաշոտ կնոջից, քարայրներում
փակւիլ և աւալին» (էջ 25) :

Ընդհանուր նախարանէն կ'իմանանք նաեւ հետեւեալ տեղեկու-
թիւնները : Սաման ծները հատորին մէջ առնուած են այս ժողովրդա-
կան վէպին արդէն հրատարակուած, ինչպէս եւ անտիպ ու նոր դրի

առնուած վոփիսակները : Խմբագրութիւնը երեք տարի շարումակ աշ-
խատեր եւ յաջողեր է դանել մօտաւորապէս 65 վոփիսակ կամ «պա-
տում» : Ա . հատորին մէջ առնուած են նախապէս լոյս տեսածները,
ոլխաւորաբար Վանի բարբառով, Մոկաց, Շատախի, Նարեկի եւ Կա-
ձետի պատումները : Բ . հատորին մէջ լոյս պիտի տեսնեն Տարօնի-
Մուշի բարբառին (Սասուն, Խլաթ, Ալաշկերտ, Ապարան եւ Նոր Բա-
յազիտ) պատկանող, ինչպէս նաեւ որոշ չափով մեկուսի մնացած
պարսկահայ բարբառով ըսուած վոփիսակները :

Այս վոփիսակները մէկէ առելի տիտղոսներով յիշուած են, այս-
պէս Սասունցի Դաւիթ, Սասնա ծներ, Զորանց տուն կամ Թիլօլ Դա-
ւիթ : Հակառակ տիտղոսներու զանազանութեան բոլորին բովանդա-
կութիւնն ալ նոյնն է . — ժողովուրդի մը հերոսական գործերուն դիւ-
ցաղներզութիւնն է, որ հարաբամեակի մը ընթացքին, սերունդէ սե-
րունդ եկեր հասեր է մեր ժամանակներուն : Ինչպէս ամէն գիւցաղ-
ներզութիւնն, Սասունցի Դաւիթն ալ հայ ժողովուրդին հոգեկան առա-
քինութիւններուն եւ երբեմն ալ տկարութիւններուն խասցումն է,
այնպէս ինչպէս ուրիշ ժողովուրդներու նմանօրինակ դիւցաղներզու-
թիւնները : Ի՞նչ մարդկային առաքելնութիւններ կը յայտնուին այս
զրոյցներուն մէջ . — հայ ժողովուրդին աղատամիրութիւնը, քաջու-
թիւնն ու արիւթիւնը, շինարար եւ ստեղծագործ ողին, արդարամը-
րութիւնը, վեհանձնութիւնն ու մեծհոգիութիւնը, եւ ինչու չէ նաեւ
միամտութիւնը :

Վիպական, երգիծական եւ տոնքիշոթական երեւոյթներուն տակ
կայ յաճախի մարդկային հոգիին անմեղունակ մեծութիւնը : Ժողո-
վրդական այս վէպը ներկայ ժամանակներու ժմնական մտքին առ-
ջեւ թերեւս չատ համեստ շրջանակով մը կը ներկայանայ : Առանց
մտնելու խորհրդածութիւններու մէջ, խօսքը պիտի տանք կրկին Բրոֆ.
Մանուկ Արեգեանի . — «Սասնա ծները վէպն անկրկնելի է, ինչպէս
մարդս չի կարող նորից երեխայ դառնալ, այլապէս նա ծաղրի առար-
կայ կը լինի : » «Երա հմայքր, նրա արուեստը հետեւեանք է այդ մի-
ջակալիքի եւ անքակտելիորէն կապւած է այն հանդամանքի հետ, որ
չհասունացած հասարակական պայմանները, որոնց մէջ ծաղել է այդ
արուեստն եւ էարող էր միայն իր ծաղումն առնել, երբեք չպիտի կա-
րողանան վերագանգութեալ» : «Մէր զարացրջանում նման վէպեր բոլո-
րովին չեն կարող ստեղծագործուել : Այդ վէպը կը մնայ, որպէս հայ
ժողովուրդի անցած դարաւոր կեանքի մի լիարիւն եւ անաղարտ յու-
շարձան, որն ունի իր անժխտելի թուլչանքը եւ որ կը շարունակի
գեղարուեստական հաճոյք պատճառել : »

Ցովէ . Թումանեանի «Սասունցի Դաւիթը» այդ զրոյց վիպա-
սանութեան գեղարուեստական մէկ վերամշակումն է, որը կուտանք
ահաւասիկ :

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄՄԵԱՆ



ՍԱՍՈՒՆՑԻ
ԴԱԻԻԹԸ

I

Առիւծ - Մհերը, զարմով դիւցազուն
Քառասուն տարի իշխում էր Սասուն.
Իշխում էր ահեղ, ու նըրա օրով
Հաւքն էլ չէր անցնում Սասմայ սարերով:
Սասմայ սարերից շա'տ ու շատ հեռու
Թընդում էր նըրա հըռչակն ահարկու,
Կյուտում էր իր փառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան էր — մի Առիւծ Մբհեր:

II

Էսպէս, ահաւոր առիւծի նըման,
Սասմայ սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի: Քառասուն տարում
«Ա՛խ» չէր քաշել նա զեռ իրեն օրում.
Բայց հիմի, երբ որ եկաւ ծերացաւ,

ին անահ սիրտը ներս սողաց մի ցաւ:
 Սկըսաւ մըտածել դիւցազուն ծերը,
 — Հասել են կեանքիս աշնան օրերը,
 Շուտով սեւ հողին կ'երթամ ես գերի,
 Կ'անցնի ծըսի պէս փառքը Մըհերի,
 Կ'անցնեն եւ անուն, եւ սարսափ, եւ ահ,
 Իմ անտէր ու որբ աշխարքի վրբա
 Ռտի կը կանդնեն հաղար քաջ ու դեւ...
 Մի ժառանդ չունիմ՝ իմ անցման ետեւ
 Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
 Ու միտք էր անում հըսկան ծերունի:

III

Մի օր էլ՝ էն դորչ յօնքերը կիտած
 Երբ միտք էր անում, երկնքից յանկարծ
 Մի հուր-Հըրեղին յայտնըեց քաջին,
 Ռտները ամպոտ կանդնեց առաջին:
 — Ողջո՞յն մեծաղօր Սասմայ հըսկային,
 Քու ձէնը հասաւ Աստըծու դահին,
 Ու շուտով նա քեզ մի զաւակ կը տայ:
 Բայց յաւ իմանաս, լեռների՝ արքայ,
 Որ օրը որ քեզ ժառանդ է տրւել,
 Էն օր կը մեռնէք քու կինն էլ, դու էլ:
 — Իր կամքը լինի, ասաւ Մըհերը.
 Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
 Բայց որ աշխարքում ժառանդ ունենանք,
 Մենք էլ նըրանով անմեռ կը մընանք:
 Հըրեւտակն էստեղ ցոլացաւ նորից,
 Ու էս երջանիկ աւետման օրից
 Երբ իննը ամիս, իննը ժամին անցաւ,
 Առիւծ՝ Մըհերը զաւակ ունեցաւ:
 Դաւիթ անւանեց իրեն կորիւնին,
 Կանչեղ իր ախապէր Զէնով Օհանին,
 Երկիրն ու որդին աւանդեց նրբան,
 Ու կինն էլ, ինքն էլ էն օրու մեռան:

IV

Էս դարում Մըսոր անշաղթ ու հրոօր
 Մըսոր - Մէլիքն էր նրստած թարաւոր,
 Հէնց որ իմացաւ՝ էլ Մըհեր չը կայ,
 Վեր կացաւ կրուով Սասունի վըրա:
 Զէնով Օհանը ահից սարսափած
 Թրչնամու սոռաջն ելաւ դըլիսաբաց,
 Աղաշանք արաւ, ընկաւ ուները.
 — Դու եղիր, ասաւ, մեր դըլիսի տէրը,

Ու քու շըւաքում քանի որ մենք կանք,
 Քու ծառան լինենք, քու խարճը միշտ տանք,
 Միայն մեր երկիր քարուքանդ չանես
 Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես:
 — Զէ՛, ասաւ Մէլիքը, քու ամբողջ ազդով
 Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
 Որ էդուց - էլօր, ինչ էլ որ անեմ,
 Ոչ մի սասունցի թուր չառնի իմ դէմ:
 Ու զընաց Օհան՝ բոլոր - բովանդակ
 Սասունը բերաւ, քաշեց թըրի տակ,
 Մէնակ Դաւիթը, ինչ արին - չարին,
 Մօտ չեկաւ դուշման Մէլիքի թըրին:
 Եկան քաշեցին՝ թէ զօրով տանեն,
 Թափ տըւաւ, մարդկանց գրցեց դէս ու դէն,
 Փոքրիկ ճըկոյթը մի քարի առաւ,
 Ապառաժ քարից կըրակ դուրս թըրաւ:
 — Պէտք է սպանեմ էս փոքրիկ ծուռին,
 Ասաւ թագաւորն իրեն մեծերին:
 — Թաղաւոր՝, ասին, դու էսքան հըզօր,
 Թըրիդ տակին է ողջ Սասուն էս օր.
 Ի՞նչ պէտք է անի քեզ մի երեխայ,
 Թէկուղ իր տեղով հէնց կըրակ դառնայ:
 — Դուք դիտէք, ասաւ Մըսորայ թագաւոր,
 Բայց թէ իմ զըլիսին փորձանք դայ մի օր,
 Էս օրը վըկայ,
 Մըրանից կը դայ:

V

Էս որ պատահեց, մեր Դաւիթ հըսկան
 Մի մանուկ էր գեռ եօթ - ութ տարեկան.
 Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
 Որ նըրա համար թէ մարդ, — թէ մըժեղ:
 Բայց վայ յ լսեղ որբին աշխարքի վըրա,
 Թէկուղ Առիւծի կորիւն լինի նա:
 Զէնով Օհանին ունէր մի չար կին:
 Մին - երկու լըռեց, մի օր էլ կարզին
 Իրեն մարզու հետ սկըսաւ կըուել.
 — Ես մենակ հոգի, հաղար ցաւի տէր:
 Ի՞նչ ես ուրիշի եթիմը բերել,
 Նըստեցրել զըլիսիս պարապ հացակեր...
 Հողեմ՝ զըլուփսը... ես դերի հօ չէ՞մ
 Ամենքի քէֆի ետեւից թըրչեմ...
 Մի կուռ կորցըրո՛ւ, կարգի՛ր մի բանի,



Գընա, իր համար աշխատանք անի...
Ու հետն սկըսաւ ողբալ ու կոծել,
իր օրը սըգալ, իր բախտն անիծել,
թէ անբախտ եղաւ աշխարքի միջում,
Ոչ մի տէր ունի, ոչ մարդն է խըզճում...
Գընաց Օհանը երեխի ոտի
Մի զոյգ ոտնաման բերաւ երկաթի,
երկաթի մի կոռ շալակին դըրած,
Ու արաւ Սասմայ քաղքի գառնարած:

Քըչեց գառները մեր հովիւ հըսկան,
Ելաւ Սասունի սարերն անըման.

«Է՛ ջան, սարե՛ր
Սասման սարե՛ր»...


Որ կանչեց, նըրա ձէնից ահաւոր
Դըղորդ - դըմբդըմբոցն ընկաւ սար ու ձոր,
Վայրի գաղաններ բըներից փախան,
Քարէ քար ընկան, դատարկուն եղան:
Դաւիթը ընկաւ նըրանց ետեւից,
Որին մի սարից, որին մի ձորից —
Աղւէս, նապաստակ, գէլ, եղնիկ բըռնեց,
Հաւաքեց, բերաւ, գառներին խառնեց,
Իրիկւան քըչեց ողջ Սասմայ քաղաք:
Կաղկա՞նձ ու ոռնո՞ց, աղմո՞ւկ, աղաղա՞կ...
Քաղքըցիք յանկարծ մին էլ էն տեսան՝
Գալիս են հըրէս անհամար գաղան.

«Վա՛յ, հարա՛յ, փախէ՛ք...»
Մեծեր, երեխէք
Սըրտաճաք ելած,
Գործները թողած,

Որը տուն ընկաւ, որը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:
Դաւիթը եկաւ, կանդնեց մէյդանում.
— Վա՛հ, էս մարդիկը ի՞նչ վաղ են քընում.

Հէ՛յ ուլատէր, հէ՛յ գառնատէր,
Ելէ՛ք, շուտով բացէք դըռներ.
Ով մինն ունէր — տասն եմ բերել,
Ով տասն ունէր — քըսանն արել...
Շուտով եկէ՛ք, եկէ՛ք, տարէ՛ք,
Զեր գառն ու ուլ գոմերն արէք:

Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում.
Ինքն էլ մեկնըւեց քաղքի մէյդանում,
Գըլուխը դըրաւ մի քարի՝ մընաց
Ու մուշ - մուշ քընեց մինչեւ լուսարաց:
Լուսին իշխաններ ելան միասին,
Գընացին Զէնով Օհանին ասին.



— Տօ՛ Զէնով Օհան, տօ՛ մահի տարած,
Էս խենթը՝ բերիր, արիր գառնարած,
Ոչ գառն է ջոկում, ոչ գէլն ու աղւէս,
Գազանով լցրեց մեր քաղաքն էսպէս.
Աստած կը սիրես՝ զի՛ր ուրիշ բանի,
Թէ չէ էս խալխին լեղաճաք կ'անի:

VII

Ելաւ Օհանը, Դաւթի մօտ գընաց

— Հօրեղբայր Օհան, հեռո՛ւ եկ, կամա՛ց,
Ուկեր կը փախչեն: — Մին էլ էնտեղից
Մի բօղ նարպաստակ, ականջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պրծաւ յանկարծ:
Դաւիթն էր. ելաւ, ետեւից ընկած
Էն սարը քըշեց, ետ բերաւ էս ձոր,
Բերաւ, ուլերին խառնեց նորից նոր:

— Օ՛Փ, ինչ դըժար է, հօրեղբայր Օհան.
Աստած օխնել է էն սեւ-սեւ ուլեր,
Ամա բօղալուկ էս ուլեր, որ կան,
Փախչում են, ցըրւում ողջ սարերն ի վեր.
Էնքան եմ երէկ վազել, չարչարւե՛լ,
Մինչեւ հաւաքել ու տուն եմ բերե՛լ...

Նայեց Օհանը, որ Դաւթի հագին
Ոտնաման չի էլ մընացել կարգին,
Մահակն է մաշւել, մինչ բուռն է հասել,
Մի օրւայ միջում էնքան է վազել:

— Դաւի՛թ ջան, ասաւ, չեմ թողնի էսպէս,
Բօղալուկ ուլեր չարչարւմ են քեզ.
Եղուց նախիրը կը տանես արօտ:

Ասաւ Օհանը ու միւս առաւօտ
Գընաց, նորից նոր մեր Դաւթի ոտի
Մի ջուխտ նոր արրեխ բերաւ երկաթի,
Երկաթի մի կոռ հարիւր լըդբական
Ու շինեց Մասմայ քաղըի նախրապան:

VIII

Քըշեց նախիրը մեր նախըորդ հըսկան,
Ելաւ Սասունի սարերն աննըման:

— «Ե՛յ, ջան սարեր,
Սասման սարե՛ր
Ի՞նչ անուշ է
Զեր լանջն ի վեր»...

Որ կանչեց, նըրա ձինից ահաւոր
Դըղորդ-դըմքըմբոցն ընկաւ սար ու ձոր:
Վայրի գազաններ բըներից փախան,
Քարէքար ընկան, դատարկուն եղան:
Դաւիթն էր. ընկաւ նըրանց ետեւից,
Որին մի սարից, որին մի ձորից,
Գէլ, ինձ, առիւծ, արջ վագըր բրոնեց,
Հաւաքեց, բերաւ, իր նախիրին խառնեց
Ու առաջն արաւ դէպ Սասմայ քաղաք:
Ունո՞ց, մըրքնչիւն, աղմո՞ւկ, աղաղա՞կ:
Վախկոտ քաղքըցիք մին էլ ի՞նչ տեսան,
Հէնց քաղքի վըրայ անհամար գաղան...

— «Վա՛յ, հարա՛յ, փախէ՛ք...»
Մ'ծեր, երեխէք
Սըրտաճաք եղած,
Գործները թողած

Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին դունն ու լուսամուտ:
Դաւիթը եկաւ կանգնեց մէյդանում.
— Վա՛հ, էս քաղքըցիք ի՞նչ վաղ են քընում:

Հէ՛յ, կովատէր, հէ՛յ գոմշատէր,
Ելէ՛ք, շուտով բացէք դըռներ,
Ով մինն ունէր — տասն եմ բերել,
Ով տասն ունէր — քըսանն արել:
Շուտով ելէ՛ք, եկէ՛ք, տարէ՛ք,
Զեր եղն ու կով գոմերն արէք:


Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնեց քաղքի մէյդանում,
Գըլուխը դըրաւ մի քարի, մընաց,

Ու մուշ-մուշ քընեց մինչեւ լուսաբաց:
Լուսին իշխաններ ելան միասին,
Գընացին Զէնով Օհանին ասին.
— Ամա՞ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան ախովէր,
Մեր եղն ու մեր կով թող մընան անտէր,
Միայն սըրանից աղատ արա մեզ:
Ոչ արջն է ջոկում, ոչ գոմէշն ու եղ,
Մի օր էս քաղքին փորձանք կը բերի,
Արջերոց կ'անի, կըտայ կաւերի:

IX

Դաւիթ չըդառաւ, մի կըրա՛կ դառաւ:
Ճարը կըտըրած՝ Օհանը բերաւ
Նետ-աղեղ շինեց ու տըւաւ իրեն՝
Գընայ, որս անի սարերի վըրէն:
Դաւիթ նետ-աղեղն առաւ Օհանից.
Հեռացաւ Սասմայ քաղքի սահմանից
Ու դառաւ որսկան: Գընաց, մի կորկում
Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,
Մըմանը գընում իրեն հօր ծանօթ
Աղքատ, անորդի մի ծեր կընկայ մօտ,
Վիշապի նըման, երկա՛ր, ահագի՛ն
Մեկնըւում, քընում կըրակի կողքին:
Մի օր էլ, երբ որ իր որսից դարձաւ,
Պառաւը վըրէն սաստիկ բարկացաւ.

— Վա՛յ Դաւիթ, ասաւ, մահըս տանի քեզ,
Գո՞ւ պէտք է էն հօր զաւակը լինե՛ս:
Զեռից ու ոտից ընկած մի ծեր կին —
Ես եմ ու էն արտն Աստղծու տակին.
Ինչո՞ւ ես գընում, տափում, տըրորում,
Իմ ամբողջ տարւան ապրուստը կըտրում:
Թէ որսկան ես դու — նետ աղեղըդ ա՛ռ,
Մըմակայ զըլմից մինչեւ Սեղանսար
Քու հէրը ձեռին մի աշխարհ ունէր,
Որսով մէջը մի որսի սար ունէր.
Եղնիկ կայ էնտեղ, այծեամ ու պախրա.
Կարո՞ղ ես — դընա, էնտեղ որս արա:
— Ի՞նչ ես, ա՛յ պառաւ, էլ ինձ անիծում.





Ես ջահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում:
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...
— Գընա՛, հօրեղբայրդ — Օհանը կասի:

X

Հօրեղօր չէմքում միւս օրը ծէղին
Դաւիթը կանդնեց աղեղը ձեռքին :
— Հօրեղբա՛յր Օհան, ինչո՞ւ չես ասել՝
իմ հէրը որսի սար է ունեցել,
Այծեամ կայ էնտեղ, եղջերու, կըխտար .
Վեր կաց. Հօրեղբա՛յր, տար ինձ որսասար :
— Վա՛յ, կանչեց Օհան, էղ քու խօսքը չէր,
էղ ով քեզ ասաւ, լեզուն պապանձէւ :
ին սարը որդի՛, գընաց մեր ձեռից,
ին սարի որսն էլ գընաց էն սարից,
էլ չկան այծեամ, եղջերու, կըխտար :
Քանի լուսեղէն քու հէրը դեռ կար,
(է՛յ զիտի օրեր — ո՞րտեղ էք կորել,)
Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Քու հէրը մեռաւ, Աստւած խըռովից,
Մըրայ թագաւոր գօրքեր ժողովեց,
Եկաւ, մեր երկիր քարուքանդ արաւ,
Ես սարի որսն էլ թալանեց տարաւ.
Եղնիկը գընաց, եղջերուն գընաց ...
Մեր զիրն էլ հալբաթ էսպէս է զրած :
Անցել է, որդի, քու բանին գընա,
Մըրայ թագաւոր ձէնըդ կ'իմանայ ...

— Մըրայ թագաւոր ինձ ի՞նչ կանի որ ...
Ես ի՞նչ եմ հարցնում Մըրայ թագաւոր .
Մըրայ թագաւոր թող Մըրը կենայ,
իմ հօր սարերում ի՞նչ գործ ունի նա ...
Վեր կաց, հօրեղբա՛յր, նետ-աղեղդ առ,
Կապարձըդ կապի՛ր, գընանք որսասար :

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Ելաւ Օհանը ճարը կըտըւած,
Գընացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար .
Անտառը ջարդած, պարիսապն աւերած, ST. NERSES SHNORHALI
Բուրգերը արած գետնին հաւասար ...

LIBRARY

XI


Գիշերը հասաւ, մընացին էնտեղ:
 Զէնով Օհանն էր, իր նետն ու աղեղ
 Դըրաւ գլխի տակ, հանդիսա խըռըմփաց.
 Դաւիթը մընաց մըտքի ծովն ընկած:
 Մին էլ նկատեց, որ մութը հեռւում
 Մի թէժ, փայլփըռուն կըրակ է վառում
 Էն լուսը բռնած:
 Վեր կացաւ, գընաց,
 Գընաց ու գընա՛ց, բարձրացաւ մի սար,
 Բարձրացաւ, տեսաւ մի մեծ մարմար քար
 Կիսից պատրուած,
 Ու միջից վառած
 Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,
 Բարձրանում, իջում ետ քարի վըրա
 Վար իջաւ Դաւիթ էնտեղից կըրկին,
 Վար իջաւ, կանչեց Զէնով Օհանին,
 — Ե՛լ, հօրեղբա՛յր, քանի՞ քընես,
 Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես:
 Լուս է իջել բարձըր սարին,
 Բարձըր սարին, մարմար քարին:
 Ե՛լ, հօրեղբայր, անուշ քընից.
 Էն ի՞նչ լուս է բըխում քարից:
 Ելաւ, խաչ քաշեց Օհանն երեսին.
 — Ե՛յ, որդի, ասաւ, մեռնիմ իր լուսին,
 Էն մեր Մարութայ սարն է զօրաւոր:
 Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
 Սամայ ապաէն, Սամայ պահապան
 Մեր սուրբ Տիրամօր վանքը Զարխափան:
 Մըտական, երբ որ կըռիւ էր գընում,
 Էնտեղ էր քու հէրն իր աղօթքն անում:
 Քու հէրը մեռաւ, Աստած խըռովեց,
 Մըրայ թագաւոր զօրքեր ժողովեց,
 Մեր վանքն էլ եկաւ քանդեց էն սարում,
 Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում . . .:

XII

Դաւիթը էս էլ երբոր իմացաւ,
 — Անուշ հօրեղբայր, հօրեղբա՛յր, ասաւ,
 Որբ եմ ու անտէր աշխարքի վըրայ,
 Հէր չունեմ՝ դու ինձ հէրութիւն արա՛:
 Էլ չեմ իջնի ես Մարութայ սարից,
 Մինչեւ չըշինեմ մեր վանքը նորից:
 Քեզանից կ'ուղեմ հինդհարիւր վարպետ,
 Հինդհազար բանւոր մըշակ նըրանց հետ.
 Որ գան՝ էս շարաթ կանգնեն ու բանին,
 Առաջւան կարգով մեր վանքը շինեն:
 Գընաց Օհանը ու բերաւ իր հետ
 Հինդհազար բանւոր, հինդհարիւր վարպետ:
 Վարպետ ու բանւոր եկան կանգնեցին,
 Զըրընկ հա թըրը՛նկ, նորից շինեցին,
 Առաջւան կարգով, փառքով փառաւոր
 Բարձըր Մարութայ վանքը Տիրամօր:
 Ցըրւած միաբանք ետ նորից եկան,
 Նորից թըրնպացին աղօթք, շարական.
 Ու երբ չէն արաւ հօր վանքը նորից,
 Յած իջաւ Դաւիթ Մարութայ սարից:

XIII

Համբաւը տարան Մըրայ Մելիքին.
 — Հապա՛ չես ասիլ՝ Դաւիթը կըրկին
 Հօր վանքը շինել, իշխան է դառել,
 Դու օխտը տարւան խարջը չես առել:
 Մելիք զայրացաւ.
 — Գընացէ՛ք, ասաւ,
 Բաղին, Կողբաղին,
 Միւլին, Զարխաղին,
 Սամայ քար ու հող տակն ու վեր արէք,
 Իմ օխտը տարւան խարածը բերէք,
 Քառսուն կոյս աղջիկ բերէք արմաղան,
 Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
 Քառսունն էլ երկար, որ ուղտեր բառնան,
 Իմ տանն ու գըրւան զարաւաշ դառնան:
 Ու Կողբաղին առաւ զօրքեր.
 — Գըլխիս վըրա, ասաւ, իմ տէր.
 Գընամ հիմի քանդեմ Սասուն,
 Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
 Քառսուն բեռնով դեղին ոսկի,



Տեղը ջընջեմ Հայոց ազգի :
Ասաւ, Մըսրայ աղջիկ ու կին
Պար բռնեցին ու երգեցին .
— Մեր Կողբադին գընաց Սասուն,
Կանայք բերի քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով ոսկի բերի ,
Մեր ճակատին ոսկի չարի ,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան ,
Զա՞ն Կողբադին, քաջ Կողբադին ,
Սասմայ Դաւթին զարկեց դետին :

Ու Կողբադին փըքւած , ուռած ,
— Շնորհակալ եմ , քոյլե՛ր , գոռաց ,
Մինչեւ դալըս զեռ համբերէք ,
ին ժամանակ պիտի պարէք . . .

XIV

Էսպէս երգով ,
Զօռով-զօրքով
Գոռ Կողբադին մըսաւ Սասուն .
Օհան լըսեց՝ կապւեց լեզուն :
Աղ ու հացով ,
Լաց ու թացով
Առաջն ելաւ ,
Խընդիրք արաւ .
— Ինչ որ կ'ուզես՝ առ , տա՛ր , ամա՞ն .
Վարդ աղջիկներ , կանայք Սասման ,
Դառը դատած դեղին ոսկին ,
Միայն գըթա մեր խեղճ ազգին ,
Մի՛ կոտորիր . մի՛ տար մահու .
Վերեւ՝ Աստուած , ներքեւը՝ դո՞ւ . . .

Ասաւ , բերաւ շարան-շարան
Վարդ աղջիկներ , կանայք Սասման :
Ու Կողբադին կանգնեց , ջոկեց ,
Մարագն արաւ , գուռը փակեց ,
Քառսուն կոյս աղջիկ , սիրուն արմազան ,
Քառսուն կարճ կընիկ , որ երկանք աղան ,
Քառսուն էլ երկար , որ ուղտեր բառնան ,
Մըսրայ Մելիքին զարաւաշ դառնան :
Դէզ-դէզ կիտեց դեղին ոսկին .
Սեւ սուզ կալաւ Հայոց ազգին :



Հէյ ո՞ւր ես, Դաւիթ, Հայոց պահապան,
Քարը պատրուի — դո՞ւրս արի մէյլան :

Քանդեց հօր վանքը ո՞ր շինեց նորից,
Ցած իջաւ Դաւիթ Մարութայ սարից,
Ժանդոտած, անկոթ մի շեղրիկ գըտաւ,
Դընաց՝ պառաւի շաղգամը մըտաւ.

Պառաւն էր եկաւ՝ անէ՛ծք, աղաղա՛կ.

— Վա՛յ, խելա՛ն Դաւիթ, շաղգամի տեղակ
Դու կըրակ ուտես, ցաւ ուտես, ասաւ,
Քու աչքն աշխարքում մենակի ի՞նձ տեսաւ.
Կորեկըս արիր դետնին հաւասար,
Էս էր մընացել ձըմեռւան պաշար,

Էս էլ կտրում ես,
Էլ ո՞նց ապրեմ ես :

Թէ կտրիճ ես գու, աղեղդ ա՛ռ, զընա՛,
Քու հօր աշխարքին տիրութիւն արա՛,
Քու հօր զանձր կե՛ր,
Թողել ես անտէր,

Մըսրայ թագաւոր դըրկել է՝ տանի :

— Էլ ի՞նչ ես վըրէս բարկանում, նանի՛.
Էղ ի՞նչ ես ասում, ես չեմ հասկանում,
Մըսրայ թագաւոր մեր ի՞նչն է տանում...
Մըսրայ թագաւոր քու աչքն է հանում,
Դամեդալօշ Դաւիթ, դըրկեր է հըրէն,
Եկել են Սասմայ քաղաքի վըրէն

Բաղին, Կողբաղին,
Սիւղին, Զարիսաղին,

Թալան են տալի բովանդակ Սասում.

Քառուն բեռ ոսկի խարաջ են ուզում,

Քառուն կոյս աղջիկ սիրուն, արմաղան,

Քառուն կարճ կընիկ, որ երկանք աղան,

Քառուն էլ երկար, որ ուզտեր բառնան,

Մըսրայ Մելիքին զարաւշ դառնան :

— Ի՞նչ ես, ա՛յ պառաւ, էլ ինձ անիծում :

Ճոյց տուր մի տեսնեմ — որտե՞ղ են ուզում :

— Որտե՞ղ են ուզո՞ւմ... Մահըս տանի քե՛զ.

Դո՞ւ պէտք է էն հօր զաւակը լինե՞ս...

Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում...

Ոսկին՝ Կողբաղին ձեր տանն է չափում,
Աղջիկներ վըլեկ մարագն են լըցրած:
Շաղղամը թողեց Դաւիթ ու գընաց:
Տեսաւ՝ Կողբաղին իրենց տան միջին
Չափում է ոսկին դիզած առաջին,
Սիւդին, Զարխաղին պարկերն են բըոնել,
Զէնով Օհանն էլ շըլինքը ծըռել,
Կանդնել է հեռու, ձեռները ծոցին:
Տեսաւ, աչքերը արնով լըցւցին:

— Վե՛ր կաց, Կողբաղին, հեռո՛ւ կանդնիր դու,
Իմ հօր ոսկին է — ես եմ չափելու:
— Կողբաղին ասաւ. — Է՛յ, Զէնով Օհան,
Կըտաս տուր խարջը էս օխտը տարւան,
Թէ չէ՝ կը գընամ, միրուքըս վըկայ,
Մըրա-Մելիքին կը պատմեմ կը դայ,
Զեր Սասմայ երկիր քար ու քանդ կանի,
Տեղը կը վարի, բօստան կը ցանի:
— Կորէ՛ք, անզգամ դուք Մըրայ շրներ,
Բա չէ՞ք իմացել դուք Սասմայ ծըռեր...
Մեռա՞ծ էք կարծում դուք մեղ, թէ՞ շըւաք
Կուղէք մեր երկիր դընէք խարջի տա՞կ...
Բարկացաւ Դաւիթ, չափը շըպըրտեց,
Տրւաւ Կողբաղնի դըլուխո ջարդեց,
Չափի փշրանքը պատն անցաւ, գընաց,
Մինչեւ օրս էլ դեռ դնում է թըռած:
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան դընացին
Բաղին, Կողբաղին,
Սիւդին, Զարխաղին:

XVI

— Վա՛յ, վա՛յ, հօրեղբայր, ի՛նչ ասեմ ես քեղ.
Մենք ունենք էստեղ դեղին ոսկու գէզ,
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի դըռան...
Հօրեղբայրն ասաւ. — Այ խենթ, խելաղար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցրը լինի աչքը մեզ վըրայ:
Սասմայ քար ու հող հեղեղի, տանի,

Ո՞վ գէմը կ'երթայ, ո՞վ կըսիւ կ'անի:
— Դու կա՛ց, հօրեղբայր, թող դայ, ես կ'երթամ,
Կ'երթամ, ես նըրան պատախան կը տամ:
Ու մութ մարադի դըռանը զարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց:
— Գընացէ՛ք, ասաւ, աղաս ապրեցէ՛ք,
Մասունցի Դաւիթին արեւ խընդրեցէ՛ք:

XVII

կսպէս ջարդւած, արիւնլըւայ
Փախան, ընկան հողը Մըրայ
Բաղին, Կողբաղին,
Սիւդին, Զարխաղին:
Մըրայ կանայք հեռուից տեսան,
Հեռուից տեսան, ուրախացան
Ու ծափ տըւին կըտրիձներին.
— Եկա՛ն, եկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...
Մեր Կողբաղին գընաց Սասուն,
Կանայք բերաւ քառսուն-քառսուն,
Կարմիր կովեր բերաւ կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան...
Հէնց մօտեցան, նըկատեցին,
Ծափ ու խընդում ընդհատեցին,
Քըրքընացին
Ու կանչեցին.

— Է՛յ, Կողբաղին մեծարերան,
իդ ո՞րտեղից լերան-լերան,
Լերան-լերան կը դաս փախած,
Հաստ դըռուխըզ կիսից ճըղած:
ին դո՞ւ չասիր՝ դընամ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բենով ոսկի հանեմ,
Հայոց երկիր աւեր անեմ:
Գացիր Սասուն քանց գէլ զազան,
Ետ ես զալի քանց շոն վազան...


Ու Կողբաղին խիստ բարկացաւ.
— Սո՛ւս կացէք դուք, լըրե՛ր, ասաւ.
Զեր մարդիկն էք տեսել դուք զեռ,
Դուք չէք տեսել Սասմայ ծըռեր:
Սասմայ ծըռեր լերան-լերան,
Նետեր ոսկեն մի-մի գերան.

Սասմայ երկիր քար ու կապան,
 'Իբժար սարեր, ձոր ու ծապան.
 Նըրանց խոտեր - ինչպէս կեռ թուր,
 Զօրք չարդեցին երեք հարիւր...
 Ասաւ ու էլ չասաւ գաղար,
 Վըսազ-վըսազ, գըլիսապատառ
 Վազեց իրեն թագաւորին:
 Խընդաց թագւորն իր աթոռին.
 — Ապրե՛ս, ապրե՛ս քաջ կողբազին,
 Արժէ՝ կախեմ ես քու ճըտին
 Մեր զուղղունի մեծ նըշանը —
 Պարգեւ քու մեծ յաղթութեանը:
 Ո՞ւր են, հապա առաջըս բեր
 Սասմայ ոսկին ու աղջիկներ:
 Ասաւ Մելիք, ու կողբազին
 Գըլուխ տըւաւ մինչեւ գետին.
 — Ապրա՛ծ կենաս, մեծ թագաւոր,
 Զոռով փախայ ես ձիաւոր,
 Ո՞նց բերէի Սասմայ ոսկին:
 Մի խենթ ծընեց Հայոց ազգին,
 Ոչ աչ գիտի, ոչ աչը ու մեծ,
 Գըլուխս էսպէս տըւաւ, չարդեց.
 «Զեմ տալ, ասաւ, իմ հօր ոսկին:
 Զեմ տալ կանայքն իմ հայ ազգին,
 Սասմայ երկիր ձեզ տեղ չըկայ...
 Քու թագաւոր, ասաւ, թո՛ղ դայ,
 Թող դայ՝ ինձ հետ կըսիւ անի,
 Թէ զոչազ է՝ զոռով տանի»:
 Կատաղեց, վըրփրեց Մըսրայ թագաւոր.
 — Կանչեցէ՛ք, ասաւ, իմ զօրքը բոլոր.
 Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
 Հազար հազար մարդ անբեխ, անմօրուք,
 Հազար հազար մարդ բեխը նոր ծըլած,
 Հազար հազար մարդ նոր թախտից ելած,
 Հազար հազար մարդ թուխ միրուքաւոր,
 Հազար հազար մարդ սիպտակ ալեւոր,
 Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,
 Հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկեն...
 Կանչեցէ՛ք, թող դան, հազւին զէ՛նք, զըրա՛հ,
 Կըսիւ տի գընամ ես Դաւթի վըրա,
 Սասունն աւերեմ,
 Հեղեղեմ, բերեմ:



XVIII.

Եսպէս անհամար զօրքեր հաւաքեց,
 Եկաւ Սասմայ դաշտ, բանակը զարկեց
 Ու ծանըր նըստեց Մըսրայ թաղաւոր:
 Կնքան ահագին բազմութիւնն էն օր
 Բաթմանայ ջըրին եկաւ ու չոքեց,
 Ով եկաւ, խըմեց — գետը ցամաքեց,
 Սասմայ քաղաքում մընացին ծարաւ:
 Զէնով Օհանին զարմանքը տարաւ:
 Քուրքը ումն առաւ, սպրը բարձրացաւ.
 Սարը բարձրացաւ, տեսաւ, ի՞նչ տեսաւ:
 Ճերմակ վլըրանից դաշուը ճերմակել,
 Ասես՝ էն դիշեր ձըմեռը եկել,
 Սպիտակ ձիւնով պատել էր Սասուն:
 Լեղին ջուր կտրեց, կամ ընկաւ լեզուն,
 Հարա՛յ կանչելով, փախաւ, տուն ընկաւ.
 — Վա՛յ, փախէ՛ք, եկա՛ւ... հա՛, հարա՛յ,
 եկա՛ւ...
 — Ի՞նչը, հօրեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն եկաւ:
 — Ցաւն ու կըրակը Դաւթի պինչն եկաւ:
 Մըսրայ թաղաւոր ելել է, եկել,
 Եկել, մեր դաշտին բանակ է զարկել.
 Թիւ կայ աստղերին, թիւ չկայ զօրքին...
 Վա՛յ մեր արեւին, վա՛յ մեր աշխարքին...
 Ե՛կ, ուկին տանենք, աղջիկներ տանենք:
 Չոքենք սուածին, պաղատանք անենք,
 Գուցէ թէ դըթայ,
 Մեղ սըրի չըտայ...
 — Դու կա՛ց, հօրեղբա՛յր, դու զարդ մի՛ անիր.
 Գընա՛, քու օդումք գու հանդիստ քընիր.
 Հիմի ես կելնեմ, Սասմայ դաշտ հ'երթամ.
 Մըսրա-Մելիքին պատասխան կը տամ:
 Ու զընաց Դաւիթ ծանօթ պառաւին.
 — Նանի ջա՛ն, ասաւ, ժանդոտած ու հին
 Երկաթի կըտոր, անթարոց, շամփուր,
 ինչ ունես չունես՝ հաւաքի՛ր, ինձ տուր,
 Մի էջ էլ գըտիր, որ վըրէն նըստեմ,
 Կըոիւ տի՛ զընամ Մըսրայ զօրքի զէմ:
 — Վա՛յ, Դաւիթ, ասաւ մահս տանի քեզ.
 Դո՞ւ պէտք է էն հօր զաւակը լինե՛ս...



Քու հէրն ունէր կըռւի համար
Հըրեղէն ձի, ոսկի քամար,
Ծալ ծալ կապէն, գուղղը պողպատ,
Թամբ սաղափէն, կուռ սաղաւարտ,
Խաչ պատրաստին իր աջ բազկին,
Զըրահ շապիկ, թուր-կէծակին,
Դու եկել ես, այ խենթ ու ծուռ,
Ինձնից կ'ուղես էշ ու շամփուր...
— Աման, նանի', չեմ լըսել դեռ:
Ուր են հիմի իմ հօր դէնքեր:
— Հօրեղօրը դընա հարցուր.
Ուր են, ասս, հանի՛ր, բեր տուր:
Բան է, թէ որ չըտայ սիրով,
Աչքը հանի՛ր՝ իրեր զօռով:

XIX.

Դաւիթ գընաց հօրեղօր մօտ.
— Էյ հօրեղայր, կանչեց հերսոս,
Իմ հէրն ունէր կըռւի համար
Հըրեղէն ձի, ոսկի քամար,
Ծալ ծալ կապէն, գուղղը պողպատ,
Թամբ սաղափէն, կուռ սաղաւարտ,
Խաչ պատրաստին իր աջ բազկին
Զըրահ շապիկ, թուր կէծակին,
Կըտաս - բեր տուր...»
— Վայ, Դաւիթ ջան,
Ահից գոռաց Զէնով Օհան.
Քու հօր մահուան տարուց-օրից
Դուրս չեմ հանել ձին ախոռից,
Ոչ սընդուկից թուր - կայծակին,
Զըրահ շապիկ, ոսկի դօտին...
Ինձ թող, ամա՞ն, մի՛ սպանիր,
Կ'ուղես - հըրէն, դընա հանի՛ր:

XX.

Հագաւ Դաւիթ զէնքն ու զըրահ,
Կապեց գօտին, թուր - կէծակին,
Խաչն էլ իր յաղթ բազկի վըրա,
Ելաւ, հեծաւ Առիւծ հօր ձին,
Հօր ձին հեծաւ ու մըտրակեց.

Զէնով Օհան լալով երգեց.
— Ավսո՞ս, հազա՞ր ափսոս հըրեղէն մեր ձին,
Ա՛խ, հըրեղէն մեր ձին.
Ավսո՞ս, հազա՞ր ափսոս մեր ոսկի դօտին,
Ա՛խ, մեր ոսկի դօտին.
Ավսո՞ս, թանկ կապէն, որ հագին տարաւ,
Ա՛խ, որ հագին տարաւ...
Դաւիթ բարկացաւ,
Զին քշեց, դարձաւ,
Օհանը վախեց,
Իր երգը փոխեց.
«Ավսո՞ս, նորելուկ Դաւիթըս կորաւ,
Ա՛խ, Դաւիթըս կորաւ:»
Էս որ իմացաւ,
Դաւիթ մեղմացաւ,
Իջաւ, Օհանի ձեռքը համբուրեց:
Զէնով Օհանն էլ, ինչպէս հայր ու մեծ,
Օրհնեց, խըրատեց նըրան հայրաբար,
Դէպի Սասմայ դաշտ դըրաւ ճանապարհ:

XXI.

Սասունցի Դաւիթին ունէր մի քեռի,
Անոնը թորոս, ահեղ աժդահաւ:
Սա էլ իմացաւ համբաւը կըռւի,
Մի բարդի ուսին գալիս է ահա:
Գալիս է՝ հեռւից բարձըր գոռալով.
— Ի՞նչ էք վէր եկել էս դաշտի միջում,
Քանի՞ գըլիսանի մարդիկ էք կամ ո՞վ,
Սասունցի Դաւիթին որ չէք ճանաչում...
Բա չէ՞ք իմանում, որ էստեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թեւաւոր,
Զըրեցէ՞ք, հիմի ուր որ է՝ կը դայ,
Եկել եմ սըրբեմ մէյդանը էսօր:

Ասաւ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դաւիթն էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

— Ով քնած էք՝ արթուն կացէ՞ք.
Ով արթուն էք՝ ելէ՞ք, կեցէ՞ք.
Ով կեցել էք՝ զէնք կապեցէք,

Զէ՛նք էք կապել՝ ձի թամբեցէ՛ք,
Զի էք թամբել՝ ելէ՛ք, հեծէ՛ք.
Յետոյ չափէ՛ք թէ մենք գընած —
Դաւիթ զող-զող եկաւ, զընաց . . .

Էսպէս կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կայծակ զարկի,
Մըսրայ զօրքի մէջ տեղ զարկեց,
Շողացնելով Թուր-Կայծակին:

Զարդեց, փըշրեց մինչեւ կէսօր.
Կէսօր արխնն եւաւ հեղեղ,
Քըշեց, տարաւ հազարաւոր
Մարդ ու դիակ ողջ միատեղ:

Կար զօրքի մէջ մի ալեւոր,
Աշխարք տեսած ու բանագէտ.
— Տըղե՛րք, ասաւ, ճամբայ տըւէք,
Գընամ խօսեմ եւ Դաւիթի հետ:


Գընաց՝ կանգնեց Դաւիթի առաջ,
Էսպէս խօսեց էն ծերումին.
— Դալար կենա՛, կուռըդ, ո՛վ քաջ,
Սուրըդ կըտրուկ միշտ քու ձեռին:

Մի ծերումուս խօսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէ՛ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մօր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
Որը ծընող աղքատ ու ծեր,
Որը լացով, քօղն երեսին
Նորապըսակ ջահիլ հարսին . . .

Թագաւորը զօռով-թըրով
Հաւաքել է, էստեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել:



Թագաւորն է քու թշնամին,
Կըոիւ ունես - իր հետ արա,
Հէ՞ր ես քաշում Թուր - կայծակին
իս անձարակ խալիսի վըրա:

— Լաւ ես ասում դու, ծերունի',
Ասաւ Դաւիթն ալեւորին,
Բայց թագաւորն ո՞ւր է հիմի',
Որ սեւ կապեմ նըրա օրին:

— Մեծ վըրանում քընած է նա,
Է՞ն, որ միջից ծուխը կենի.
Էն ծուխն էլ հօ ծուխ չի որ կայ,
Գոլորշին է իր բերանի:

Ասին. դէպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դաւիթն իր ձին,
Քըշեց, գընաց ու դըռանը
Գոռաց կանդնած արաբներին.

— Ո՞ւր է, ասաւ, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցէք, զայ ասպարէղ.
Թէ մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ դըրողն եմ ես....

— Մելիքն, ասին, քուն է մըսել,
Օխտը օրով պէտք է քընի.
Երեք օրն է դեռ անցկացել,
Չորս օր էլ կայ, քունը առնի.

— Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղձ
Խալիսին լըցրել ծովն արիւնի,
Ինքը մըտել վըրանին մէջ՝
Օխտը օրով հանդիստ քընի' ...

Քընել - մընել չեմ հասկանում,
Վեր կացրէք շուս, դուրս զայ մէյլան,
Էնպէս դըրան ես քընացնեմ,
Որ չը զարթին էլ յաւիտեան:

— Ելան՝ մարդիկ ճարահատած
Շամփուր դըրին թէժ կըրակին
Ու զարկեցին խոր մըրափած
Մըրա-Մելքի բաց կըրսկին:

— Օ՞Փ, էլ հանդիստ քուն չունի մարդ
իս անիծւած լըւի ձեռից,
Խոր մըռընչաց հըսկան հանդարա
Ու շուռ եկաւ, քընեց նորից:

Ելան, բերին մեծ դութանի
Խոփը դըրին թէժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կեծկըծալի,
Շիկնած տըւին մերկ թիկունքին:

— Օ՞Փ, էլ հանդիստ քուն չունի մարդ
իս անիրաւ մոծակներից.
Աչքը բացաւ հըսկան հանդարատ,
Ուզում էր ետ քնել նորից,

Տեսաւ՝ Դաւիթին: Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըուընչալով,
Փըշեց վըրէն, որ թըոցնի
ին աժդըհին մի փըշելով:

Տեսաւ, տեղից ժաժ չի դալի,
Զարմանքն ու ահ պատեց հոգին:
Ալնոտ աչքերն ըսպառնալի
Յառեց խոժոռ Դաւիթի աչքին:

Նայեց թէ չէ, զդաց՝ իր մէջ
Տասը գոմշի ուժ պակասեց:
Պառկած տեղից վրայ նստեց
Ու ժպտալով հետը խօսեց.

— Բարով, Դաւիթ, յողնած ես դեռ.
Ե'կ, մի նատիր, խօսենք կարդին,
Ցետոյ դարձեալ կըոիւ կանենք,
Եթէ կըոիւ կ'ուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառասում զազ խոր հոր էր փորել,
Ցանցով վասկել մութ բերանը,
Վըրէն վասփուկ խալի փըռել:



Ում որ յաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
Էն կորստեան հորի վըրայ:

Իջաւ Դաւիթ ձիուցը ցած,
Գընաց նըստեց ... ընկաւ հորը:
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց
Մըսրայ դաժան թագաւորը:

— Դէ, թող հիմի գընա խաւար
Հորում փըթի, էնքան մընայ:
Ու ահադին մի ջաղացքար
Բերաւ, դըրաւ հորի վըրայ:

XXII

Քընեց էն գիշեր Զէնով Օհանը,
Գիշերն երազում երեւաց ծերին՝
Մըսրայ երկընքում արեւ ճառագած,
Սեւ ամպ էր պատել Սասմայ սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըռաւ տեղից:
— Վա՛յ, կընի՛կ, ասաւ, մի ճըրագ արա՛,
Գընա՛ց մեր անիործ Դաւիթը ձեռից,
Սեւ ամպ էր իջել Սասունի վըրայ:

— Հողե՛մ գըլուխոդ, ասաւ կընիկը,
Ո՛վ գիտի՛ Դաւիթն ո՛ւր է քէֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում:

Քընեց Օհանը: Վեր կացաւ դարձեալ.
— Կընի՛կ, Դաւիթը նեղ տեղ է ընկած.
Մըսրայ վառ աստղը շողում էր պայծառ,
Մեր աստղը հիւանդ ցոլքում դալկացած:

— Ի՞նչ եղաւ քեզ, մա՛րդ, գիշերւան կիսին.
Բարկացաւ վըրէն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց էլ ևս Օհանն երեսին,
Շուռ եկաւ, քընեց խըւռված հոգով:

Մի ուրիշ պատկեր առելի ահեղ.
Տեսաւ՝ երկընքի բարձըր կամարում
Վառւում էր Մըսրայ աստղը փառահեղ,
Սասմայ աստղիկը սուզւեց խաւարում:

Զարթնեց վախեցած : — Տունը քանդւի, կի՞ն,
Ես ո՞նց լընեցի քու էդ կարճ խելքին.
Կորաւ մեն-մենակ մեր ջահէլն անտէր.
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, զէնքերըս մի բե՛ր...

XXIII

Ելաւ Օհան, գոմը մըտաւ,
Զարկեց ճերմակ ձիու մէջքին.
— Է՛յ, ճերմակ ձի, մինչ ե՞րբ, ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըուին:

«Մինչեւ լուս կը հասցնեմ.»
Ու ձին տըւաւ փորը գետին:
— Մէջքդ կոտրի՛, լուսն ի՞նչ անեմ.
Լաշին հասնեմ ևս թէ՞ նաշին:

Կարմիր ձիու մէջքին զարկեց.
Սա էլ ետես փորը գետին.
— Զա՛ն կարմիր ձի, մինչ ե՞րբ դու ինձ
Կը հասցընես Դաւթի կըուին:

«Մի ժամի մէջ, կարմիրն ասաւ,
Կը հասցընեմ Դաւթի կըուին»:
— Լեղի դառնայ, սեւ մահ ու ցաւ,
Ինչ տըւել եմ քեզ՝ էն գարին:

Հերթը եկաւ սեւին հասաւ.
Գետին չերետ փորը սեւ ձին:
— Է՛յ, ջան Սեւուկ, մինչ ե՞րբ, ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըուին:

«Եթէ ամուր մէջքիս մընաս,
Ոտըդ գընես ասպանդակին,
Մինչեւ մէկ էլ ոտըդ չուռ տաս,
Կը հասցընեմ», ասաւ սեւ ձին:

XXIV

Սեւ ձին քաշեց Զէնով Օհան,
Զախը գընաւ ասպանդակին,
Աջն էլ մինչեւ չուռ տար վըրան,
Կանդնեց Սասմայ սարի գըլիին:

Տեսաւ՝ Դաւթի նըժոյդն անտէր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքեւ Մըսրայ զօրքը չոքած,
Ինչպէս անձէր ծըփուն մի ծով:

Օխտը գոմշի կաշի հաղաւ,
Որ ըս պատուի իրեն զօրից,
Կանդնեց Օհան, ամպի նըման
Գոռաց Սասմայ սարի ծերից:

— Հէ՛յ, հէ՛յ, Դաւթիթ, ո՞րսեղ ևս դու.
Յիշի՛ր Խաչը քո աջ բաղկի,
Առւրբ Տիրամօր անունը տո՛ւր,
Լո՛ւսը դուրս ե՛կ արեղակի...

Զէնը գընաց գըմդըմբալով
Դաւթի ականջն ընկաւ հորում.
— Հա՛յ, հա՛յ, ասաւ հօրեղբայրս է,
Սասմայ սարից ինձ է գոռում:

Ո՞վ Մարութայ Աստւածածին,
 Ո՞վ անմահ Խաչ պատարագի,
 ԶԵՇ եմ կանչել, — հասէ՛ք Դաւթին...
 Կանչեց, տեղից ելաւ ոտքի

 ինպէս զարկեց ջաղացքարին՝
 Քարը եղաւ հազար կըտոր,
 Կըտորները երկինք թըռան,
 Ու գնում են մինչեւ քսօր:

 Ելաւ հորից, կանդեց ահեղ:
 Մարսափ կալաւ դեւ Մելիքին:
 — Դաւիթ ախպէր, ե՛կ դեռ էստեղ,
 Սեղան նըստե՛նք իսուենք կարդի՛ն...

 — Ել չեմ նըստիլ ես քու հացին,
 Դու տըմարտի, վախկոտ ու նենդ.
 Շո՛ւս, զէնքըդ առ, հեծիր քու ձին,
 Դո՛ւս եկ մէյդան, կըոիւ անենք:

 — Կըոիւ անենք, ասաւ Մելիք
 Իմն է միայն զարկն առաջին:
 — Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դաւիթ
 Գընաց, կեցաւ դաշտի միջին:

 Ելաւ, կանդեց Մըսրա-Մելիք,
 Իր գուրզն առաւ, հեծաւ իր ձին,
 Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր
 Ու էնտեղից եկաւ կըրկին:

 Երեք հաղար լիդր էր քաշում
 Հըսկայական իր մըկունդը.
 Եկաւ, զարկեց. կորաւ փոշում
 Ու երերաց երկրի գունդը:

 Երկիր քանդւեց կամ ժաժք եղաւ,
 Ասին մարդիկ շատ աշխարքում:
 — Զէ՛, ասացին, արնի ծարաւ
 Հըսկաներն են իրար զարկում:

— Մեռաւ Դաւիթ էս մի զարկից,
 Ասաւ Մելիք իրեն զօրքին:
 — Կենդանի ե՛մ, ամպի տակից
 Գոռաց Դաւիթ Մըսրա-Մելիքին:

 — Հա՛յ, հա՛յ, մօտիկ տեղից եկայ,
 Տե՛ս, ո՛րտեղից հիմի կըդամ:
 Ու վեր կացաւ, կանդնեց հըսկան,
 Իր ձին հեծաւ երկրորդ անդամ:

 Երկրորդ անդամ քչեց Հալաբ
 Ու բաց թողեց ձին Հալաբից,
 Բուք վեր կացաւ, տեղ ու տարափ,
 Արար աշխարհ դողաց թափից:


 Եկաւ, զարկեց. զարկի ձէնից
 Մօտիկ մարդիկ ողջ խլացան:
 — Գընաց Դաւիթ Մասմայ տանից,
 Գուժեց զոռող Մըսրայ արքան:

 — Կենդանի եմ, կանչեց Դաւիթ,
 Մին էլ արի՛ — հերթն ինձ հասաւ:
 — Հա՛յ, հա՛յ, մօտիկ տեղից եկայ,
 Կանչեց Մելիք ու վեր կացաւ:

 Երբորդ անդամ հեծաւ իր ձին,
 Գընաց մինչեւ հողը Մըսրայ,
 Ու էնտեղից, գուրզը ձեռին
 Քըշեց, եկաւ Դաւիթի վըրայ:

 Եկաւ, զարկեց բոլոր ուժով,
 Ծանըր զարկով հըսկայական.
 Փոշին եկաւ Մասմայ դաշտից,
 Բընեց երեսն արեգական:

 Երեք գիշեր ու երեք օր
 Փոշին կանդնեց ամպի նըման,
 Երեք գիշեր ու երեք օր
 Բոթը տըւին Դաւիթի մահւան:



Երբ որ անցաւ երեք օրը,
ին ամպի պէս կանգնած փոշում
կանգնեց Դաւիթ, ինչպէս սարը,
Գլրդուռ սարը մէդ-ըշուշում:

— Մելիք, ասաւ, ո՞ւմն է Հերթը:
Սարսափ կալաւ գոռ Մելիքին,
Մահւան դողը ընկաւ սիրտը
Ու տապ արաւ գոռող հողին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջաւ, մըտաւ վիճն էն խաւար,
Վըրէն քաշեց քառսուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:


Մըունչալով ելաւ տեղից
ին առիւծի առիւծ որդին,
իր ձին հեծաւ ու փոթորկեց,
Խաղաց, չողաց Թուր-Կայծակին:

Առաջ վաղեց մազերն արձակ
Մելիքի պառաւ մայրը ջաղու.
— Դաւիթ, մաղըս ա՛ռ ոտիդ տակ,
իդ մի զարկը ինձ բաշխեր դու:

Երկրորդ անգամ թուրը քաշեց.
իս անգամ էլ եկաւ քուրը.
— Դաւիթ, եթէ կ'ուզես, կանչեց,
իմ սրտին զարկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասաւ,
Ելաւ Դաւիթ երրորդ անգամ.
— իս մի զարկն ու Աստւած՝ ասաւ,
էլ մարդ չըգայ, պէտք է որ տամ:

Ասաւ, ելաւ ու փոթորկեց,
Թըստաւ, չողաց Դաւիթ հուր ձին,
Զին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջաւ Թուր-Կայծակին:



Անցաւ քառսուն դոմչի կաշին,
Անցաւ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժամատ հըրէշին,
Օխուը դաղ էլ դէնը դընաց:

— Կենդանի՛ եմ, մին էլ արի՛,
Գոռաց Մելիք հորի տակից:
Դաւիթ լըսեց, չսոյ դարմացաւ
Իրեն դարկից, թուր-կայծակից...

— Մելիք, ասաւ, թա՛փ տուր մի քեղ:
Ու թափ տըւաւ Մելիքն իրեն,
Միջից եղաւ ճիշտ երկու կէս,
Մէկն ընկաւ դէսն ու միւսը՝ դէն:

Էս որ տեսաւ Մըսրայ բանակ,
Զուր կըտըրւեց ահ ու վախից:
Դաւիթ կանչեց. — Մի՛ վախենաք,
Ականջ արէք հալա դեռ ինձ:

Դուք ըուանչպար մարդիկ, ասաւ,
Զուրկ ու խաւար քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցաւ,
Հազար ու մի հոգսեր ունէք:

Ի՞նչ էք առել նետ ու աղեղ,
Եկել թափիկ օտար դաշտեր.
Զէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Զանձրացէ՞լ էք խաղաղ ու հաշտ
Հողադործի օր ու կեանքից,
Թէ՞ զըզւել էք ձեր հանդ ու դաշտ,
Զեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձէ՞ք եկած ճանապարհով
Զեր հայրենի հողը Մըսրայ.
Բայց թէ մին էլ դէնք ու զոռով
Վեր էք կացել դուք մեզ վըրայ,

Հորում լինեն քառսուն դազ խոր
Թէ ջաղացի քարի տակին, —
Կ'ելնեն ձեր դէմ, ինչպէս էսօր,
Սասմայ Դաւիթ, Թուր-կայծակին:

Էն ժամանակ Աստւած դիտի,
Ով մեղանից կըլնի փոշման.
Մհ՞նք, որ կ'ելնենք ահեղ մարտի,
Թէ դուք, որ մեղ արիք դուշման...:

(ՎԵՐՁ)

10106

Fmo. Araxas - 46 rue Richer, Paris



